



«Այբ» ավագ դպրոց

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2021 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե
Հավելյալ նյութ՝ Պատասխանների գրքույկ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել Պատասխանների գրքույկի կազմին գրված ցուցումներին:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Պետք է պատասխանել բոլոր հարցերին:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը 32 է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 9 տպագիր էջից:

Հայոց պատմություն

Ուշադրություն. առանց շտապելու կարդացե՛ք և ուսումնասիրե՛ք բերված աղբյուրները: Պատասխանե՛ք հարցերին՝ հիմնավորելով տրված աղբյուրներում առկա փաստերով:

Առաջադրանք 1 (8 միավոր)

Ստորև տրված է հատված V դարի հայ պատմիչ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունից:

Բայց Արշակն ավելի ևս հանդգնելով՝ մի անմիտ գործ գործեց: Մասիս լեռան թիկունքում և շինեց մի դաստակերտ՝ մեղավոր մարդկանց ժողովատեղի. և հրաման արձակեց, թե ով կարողանա այդտեղ ընկնել ու բնակվել, նրա վրա դատական օրենքը չի գործի: Անմիջապես ամբողջ հովիտը ծովացած լցվեց մարդկանց բազմությամբ. որովհետև ավանդաբաններն ու պարտապանները, ծառաներն ու հանցագործները, գողերն ու մարդասպանները, ուրիշների կանանց փախցնողները և ուրիշ սրանց նմանները փախչում-ապաստանում էին այնտեղ, և նրանց դեմ հարցաքննություն ու դատաստան չկար: Նախարարները շատ անգամ բողոքեցին, բայց Արշակը նրանց չլսեց այն աստիճան, որ նրանք մինչև անգամ Շապուհին դիմեցին: Եվ երբ Շապուհը Հունաստանից ետ էր դառնում, իր սպարապետներից մեկին հայ գնդով ուղարկեց, որ երբ հարմար լինի, Արշակին բռնի, բայց ևս խուսափեց նրանից, փախավ Կովկասի կողմերը՝ վրացիների հետ միանալով:

Հարց Ա

Ո՞ր արքան է հիշատակված աղբյուրում և ե՞րբ է գահակալել: Ո՞ր քաղաքն է նա կառուցել:

Տեքստում հիշատակվող արքան Արշակ II-ն է, որը գահակալել է 350-368 թվականներին: Նրա օրոք ու նախաձեռնությամբ է կառուցվել աղբյուրում հիշատակվող քաղաքը՝ Արշակավանը, որտեղ բնակություն հաստատելու իրավունք ունեին բոլորը՝ անկախ իրենց կարգավիճակից ու հնարավորություններից:

Հարց Բ

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր արքան կառուցել նոր քաղաքը: Ի՞նչ վերաբերմունք ունեին քաղաքի նկատմամբ նախարարները և ինչո՞ւ: Ի՞նչ ճակատագիր ունեցավ քաղաքը: Հիմնավորե՛ք պատասխանը աղբյուրի տվյալներով և ձեր գիտելիքներով:

Արշակավանի կառուցմամբ Արշակ II-ը նպատակ ուներ ստեղծելու հենարան արքայական իշխանության համար: Քաղաքում բնակվելու իրավունք էր տրված բոլոր ցանկացողներին՝ կլինեին դրանք այլ նախարարներից կախյալ գյուղացիներ, վասալներ թե «հանցագործներ, գողեր ու մարդասպաններ»: Զրկվելով իրենց հիմնական աշխատուժից ու հզորության աղբյուրից՝ նախարարները խիստ դժգոհ էին Արշակավանի կառուցումից: Դրա վկայությունն է նաև հայ պատմիչների բացասական վերաբերմունքը քաղաքի նկատմամբ (հիշենք, որ Խորենացու պատմությունը, օրինակ, գրվել է Սահակ Բագրատունի ասպետի պատվերով): Այդ իսկ պատճառով էլ արքայի բացակայության պայմաններում նախարարական գործերը հիմնովին ավերեցին Արշակավանը:

Առաջադրանք 2 (8 միավոր)

Աղբյուր 1

Ստորև տրված է հատված արդիի հայ պատմագետի աշխատությունից:

ԽՍՀՄ-ի մի շարք տարածաշրջաններում բռնկվեցին իսկական միջէթնիկ պատերազմներ: Ազգամիջյան արյունալի ընդհարումների լայն ծավալումը հետևանք էր տարիների ընթացքում իրականացված բուլճիկյան ազգային քաղաքականության, որի մի մասն էր վարչատարածքային կամայական բաժանումը: Ձգտելով արդարացնել այդ քաղաքականությունը՝ շուրջ 70 տարի Կոմունիստական կուսակցությունը փորձում էր ԽՍՀՄ-ում բնակվող հարյուրից ավելի ազգություններին համոզել, թե երկրում ազգային հարցը հաջողությամբ ու վերջնականապես լուծված է: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ իշխող վարչակազմը հետևողականորեն ճնշում էր ազգային ձգտումներին նպատակաուղղված ամեն մի փորձ:

Աղբյուր 2

Ստորև պատկերված է 1986 թ. ԱՄՆ-ում տպագրված ծաղրանկար:



Հարց Ա

Ազգամիջյան ի՞նչ խնդիր բորբոքվեց Հայաստանում խորհրդային շրջանում: Օգտվելով աղբյուրների տեղեկություններից ու ձեր գիտելիքներից՝ բացատրե՛ք այդ խնդրի պատճառները:

խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում, ինչպես և ԽՍՀՄ բազմաթիվ այլ հանրապետություններում լուրջ խնդիր էր ազգային հարցը: Հայաստանում այն դրսևորվեց 1988 թվականից, երբ աշխուժացավ Արցախյան հարցը: Բուլճիկյան կատարած «կամայական վարչական բաժանման հետևանքով» 95%-ով հայաբնակ Լեռնային Ղարաբաղը դեռևս 1921 թվականից հայտնվել էր Ադրբեջանի կազմում: Արցախահայությունը խորհրդային տարիներին բազմիցս փորձել է քայլեր ձեռնարկել մարզը խորհրդային Հայաստանին միացնելու համար, սակայն իշխող վարչակազմը «հետևողականորեն ճնշում էր ազգային ձգտումներին նպատակաուղղված ամեն մի փորձ»՝ համոզելով բնակչությանը, թե ազգային հարց ԽՍՀՄ-ում

գոյություն չունի: Խնդիրը հատկապես ակտիվացավ Գորբաշովի իշխանության տարիներին, որի սոված ազատությունները հանգեցրին ազգային հարցի կտրուկ աշխուժացմանը:

Հարց Բ

Ի՞նչ կապ կա ԽՍՀՄ-ի վերաբերյալ Ադբյուր 1-ի տեղեկությունների և Ադբյուր 2-ում պատկերվածի միջև:

1985 թ. ԽՍՀՄ-ում գալով իշխանության՝ Միխայիլ Գորբաշովը հայտարարեց Վերակառուցման (Перестройка)-ի մեկնարկը, որի նպատակը ԽՍՀՄ-ին Արևմուտքի զարգացած երկրներին համազոր պետություն դարձնելն էր: Գորբաշովը հռչակեց խոսքի, մամուլի ազատություն, բազմակուսակցական համակարգի մեկնարկ: Այսինքն՝ բռնատիրական համակարգից ԽՍՀՄ-ում անցում էր կատարվում ժողովրդավարական ազատությունների: Խորհրդային մի շարք հանրապետություններում սկսեց բարձրաձայնվել ազգային հարցը, սկսվեցին անգամ ազգամիջյան բախումներ ու «միջէթնիկ պատերազմներ»: Վերակառուցումը, ինչպես երևում է նաև ծաղրանկարում, մի քանի տարվա ընթացքում հանգեցրեց ԽՍՀՄ-ի հիմքերի թուլացմանը՝ դոմինոյի էֆեկտով կործանելով թե՛ պետությունը, թե՛ Կոմունիստական կուսակցությունը:

Համաշխարհային պատմություն

Առաջադրանք 3 (8 միավոր)

Մեջբերված հատվածը խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի գրավման մասին է:

«Չավթիչները ներխուժեցին Կոստանդնուպոլիս: Նրանք ոսկի և արծաթ էին փնտրում: Սրբապատկերների վրայից պոկում էին ոսկյա և արծաթյա դետալները: Թանկարժեք մետաղներից պատրաստված արձանները հալեցնում և ձուլակտորների էին վերածում: Մարմարյա արձանները պարզապես կտոր-կտոր էին անում: Այն զորքը, որը պատրաստվում էր մարտնչել քրիստոնեական հավատի համար, ավերեց Կոստանդինոս կայսեր հինավուրց քաղաքը»:

Հարց Ա

Ե՞րբ և ո՞ր խաչակրաց արշավանքի ժամանակ է Կոստանդնուպոլիսը նվաճվել խաչակիրների կողմից: Փորձե՞ք բացատրել, թե ի՞նչ նկատի ունի աղբյուրի հեղինակը, երբևէում է. «Այն զորքը, որը պատրաստվում էր մարտնչել քրիստոնեական հավատի համար, ավերեց Կոստանդինոս կայսեր հինավուրց քաղաքը»:

Կոստանդնուպոլիսը խաչակիրների կողմից նվաճվել է 1204 թ.: Խաչակրաց չորրորդ արշավանքի ժամանակ: Խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակ խաչակիրներին չհաջողվեց ազատագրել Երուսաղեմը: Այդ պատճառով էլ հնդկեստիոս III պապը կազմակերպեց նոր արշավանք: Սակայն արշավանքն այլ կերպ ընթացավ, քան պապն էր կամենում: «Այն զորքը, որը պատրաստվում էր մարտնչել քրիստոնեական հավատի համար, ավերեց Կոստանդինոս կայսեր հինավուրց քաղաքը» արտահայտությամբ հեղինակը նկատի ունի այն, որ այս արշավանքը պետք է ուղղված լիներ մահմեդականներից քրիստոնեական հավատը և աշխարհը պաշտպանելուն, սակայն տեղի ունեցավ հակառակը: Հանուն ոսկու և արծաթի խաչակիրները ավերեցին «Կոստանդինոս կայսեր հինավուրց քաղաքը»՝ քրիստոնեական պետության՝ Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը: Ի տարբերություն առաջին երեք արշավանքների, չորրորդ արշավանքը առավել ցայտուն կերպով բացահայտեց խաչակիրների իրական նպատակները և մեծ հարված հասցրեց շարժման հեղինակությանը, քանզի զավթիչների շահամոլությունը ստվերեց խաչակրաց շարժման հիմնական նպատակներից մեկը, այն է՝ «անհավատներից» Հիսուս Քրիստոսի գերեզմանը փրկելը:

Հարց Բ

Ո՞ւմ առաջարկությամբ և ինչո՞ւ խաչակիրները գրավեցին Կոստանդնուպոլիսը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այս իրադարձությունը Բյուզանդական կայսրության համար:

Խաչակիրներն Արևելք տեղափոխվելու համար, հակառակ Հռոմի պապի ցանկության, որոշեցին հավաքվել ոչ թե Սիցիլիայում, այլ Վենետիկում: Նրանք բանակցություններ սկսեցին Վենետիկի կառավարիչ Էնրիկո Դանդոլոյի հետ, որպեսզի Վենետիկի նավերով հասնեն Արևելք: Օգտվելով Բյուզանդիայում ծագած զահակալական կռիվներից՝ Դանդոլոն, որպես տեղափոխման փոխհատուցում, խաչակիրներին առաջարկեց գրավել Կոստանդնուպոլիսը: Խնդիրն այն է, որ Կոստանդնուպոլիսը Վենետիկի առևտրական մրցակիցն էր, և խաչակիրների զավթողական մտադրություններն օգտագործելով, Դանդոլոն նպատակ ուներ հարված հասցնել իր առևտրական մրցակցին: Խաչակիրները համաձայնվեցին և 1204 թ. գրավեցին Բյուզանդիայի մայրաքաղաքը:

Խաչակիրներն այլևս մոռացան Արևելք շարժվելու անհրաժեշտության մասին: Բյուզանդիայից խլված տարածքների վրա նրանք ստեղծեցին իրենց պետությունը՝ Լատինական կայսրությունը, որը սակայն երկար չգոյատևեց: 1261 թ. կայսր Միքայել VIII-ը հետ գրավեց Կոստանդնուպոլիսը: Սակայն խաչակրաց չորրորդ արշավանքի հետևանքով Բյուզանդիան

այնպես էր տրոհվել ու թուլացել, որ այլևս չկարողացավ վերականգնել երբեմնի հարստությունն ու հզորությունը: Օգտվելով Բյուզանդիայի թուլացումից՝ 1453 թ. մայիսի 29-ին թուրքերը գրավեցին մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, և Բյուզանդական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց:

Առաջադրանք 4 (8 միավոր)

Աղբյուր 1

Ստորև ներկայացված է հատված 1947 թ. մարտի 12-ին ԱՄՆ Կոնգրեսում Նախագահ Հարի թրումանի ելույթից, որը հայտնի է «Թրումանի դրկտորին» անունով:


Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը այնպիսի պայմանների ստեղծումն է, որոնցում մյուս ազգերը և մենք կկարողանանք մշակել հարկադրանքից զերծ ապրելակերպ: ...Շատ երկրների ժողովուրդներին վերջերս, հակառակ իրենց կամքի, պարտադրվել են ամբողջատիրական վարչակարգեր: ԱՄՆ-ի կառավարությունը հաճախ իր բողոքն է հայտնել Լեհաստանում, Ռումինիայում և Բուլղարիայում հարկադրանքի և ահաբեկման քաղաքականության դեմ... Պետք է հայտարարեմ, որ նման իրադարձություններ շատ այլ երկրներում ևս եղել են:

Այս պահին աշխարհում գրեթե յուրաքանչյուր ազգ պետք է ընտրություն կատարի երկու այլընտրանքային ապրելակերպերի միջև: ...Մեկը հիմնված է մեծամասնության կամքի վրա և առանձնանում է ազատ ժողովրդավարական հաստատություններով, ազատ ընտրություններով, մարդու, խոսքի, դավանանքի ազատություններով, քաղաքական ճնշումների բացակայությամբ: Մյուսը հիմնված է մեծամասնությանը բռնի պարտադրված փոքրամասնության կամքի վրա: Այն առանձնանում է ահաբեկչությամբ և հարկադրանքով, մամուլի կառավարմամբ և անհատի ազատությունների ճնշմամբ...

Աշխարհի ազատ ժողովուրդները մեր օգնությունն են ակնկալում իրենց ազատությունը պահպանելու համար: Եթե մենք տատանվենք, կարող ենք վտանգել աշխարհի խաղաղությունը:

Աղբյուր 2

Ստորև տրված է 1948 թ. Մեծ Բրիտանիայում տպագրված ծաղրանկար:



Հարց Ա

Ի՞նչ է նշանակում «սառը պատերազմ» եզրույթը, ո՞ր թվականը և ի՞նչն է համարվում դրա սկիզբը: Տնտեսական և քաղաքական ի՞նչ դրսևորումներ այն ունեցավ:

Սառը պատերազմը սուր հակադրությունն էր ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև Երկրորդ աշխարհամարտին հաջորդող տասնամյակներում: Դրա սկիզբը Մեծ Բրիտանիայի Նախկին վարչապետ Ու. Չերչիլի 1946 թ. ֆուլտոնյան ճամն էր, որումՆա մեղադրեց ԽՍՀՄ-ին «Եվրոպայի կենտրոնում երկաթե վարագույր քաշելու և Արևելյան Եվրոպան մնացյալ աշխարհից կտրելու մեջ»: Նա առաջ քաշեց «բոլոր միջոցներով խորհրդային տերության զսպման» գաղափարը: Նրա գաղափարը շարունակեց ԱՄՆ Նախագահ Հ. Թրումանը և օգնություն խոստացավ այն երկրներին, որոնց սպառնում էր «խորհրդային վտանգը»:

Սառը պատերազմի տնտեսական առաջին դրսևորումներն էին Մարշալի պլանը (1947 թ.), որի շրջանակներում ԱՄՆ-ը վիթխարի օգնություն ցուցաբերեց եվրոպական երկրներին, և ի հակադրություն դրա՝ ԽՍՀՄ-ի ջանքերով Նոյն թվականին ստեղծված Տնտեսական փոխօգնության խորհուրդը: Վերջինս ընդգրկում էր Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները:

Քաղաքական ոլորտում սառը պատերազմի արգասիք էին ռազմաքաղաքական հակադիր կառույցները՝ Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ, ստեղծվել է 1949 թ.) և Վարշավյան դաշինքը (ստեղծվել է 1955 թ.), որոնք գործում էին համապատասխանաբար ԱՄՆ-ի և Խորհրդային Միության գլխավորությամբ: Երկու կառույցների թշնամանքն արտահայտվում էր մշտական լարվածության առկայությամբ և տեղական պատերազմների սանձազերծմամբ, որոնցում գերտերություններից յուրաքանչյուրը աջակցում էր կողմերից մեկին, թեպետ պաշտոնապես ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը չէին պատերազմում միմյանց դեմ: Պատահական չէ, որ դարաշրջանը բնութագրվում էր «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» արտահայտությամբ:

Հարց Բ

Ըստ ձեզ՝ ո՞վ էր մեղավոր Սառը պատերազմի սանձազերծման համար՝ Միացյալ Նահանգները, թե՞ Խորհրդային Միությունը: Գրե՛ք ձեր վարկածը և հիմնավորե՛ք այն օգտագործելով աղբյուրների տեղեկությունները և ձեր գիտելիքները:

Տարբերակ 1

Սառը պատերազմի մեղավորը Միացյալ Նահանգներն էր: Խորհրդային վտանգից ազատ ժողովուրդներին «պաշտպանելու» պատրվակով՝ Միացյալ Նահանգները, ըստ Էության, Թրումանի ճառով սկիզբ դրեց սառը պատերազմին: Ակնհայտ է, որ «ազատ ժողովուրդներին» օգնելով՝ ԱՄՆ-ը նրանց նկատմամբ ձեռք էր բերելու ակնհայտ գերակայություն՝ վերջիններիս զցելով իրենից տնտեսական և ռազմական կախման մեջ (Մարշալի պլան և ՆԱՏՕ): Այս առումով ամերիկյան գործելաոճը հանգեցրեց խորհրդային կողմի պատասխանին (չէ՞ որ օրինակ՝ ԽՍՀՄ կողմից ՏՓԽ-ի, Վարշավյան դաշինքի, սեփական ատոմային զենքի ստեղծումը քայլեր էին ի պատասխան ԱՄՆ-ի) և սառը պատերազմի սանձազերծմանը:

Կարելի է ենթադրել, որ ամերիկյան վերնախավի գլխավոր նպատակը համաաշխարհային տիրապետության հասնելն էր: Դրան էին նպատակաուղղված ԱՄՆ-ի մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին և դրա հետևանքները: Դեռևս պատերազմի ավարտական փուլում 1945 թ. օգոստոսի 6-ին և 9-ին, ճապոնական երկու քաղաքների՝ Հիրոսիմայի և Նագասակիի ռմբակոծումը վկայում էին ամերիկյան կողմի վիթխարի ուժի և լուրջ նկրտումների առկայության մասին: ԽՍՀՄ-ը անհանգիստ էր ամերիկյան օդուժի և ռազմաբազաների տարածման պատճառով, որը պահանջում

Էր պաշտպանական համապատասխան միջոցառումների ձեռնարկում: Այստեղից էլ՝ սպառազինությունների ու տիեզերական մրցավազքերը:

Տարբերակ 2

Սառը պատերազմի մեղավորը խորհրդային Միությունն էր: Հայտնի է, որ 1944–1945 թթ. ԽՍՀՄ-ը, հակառակ դաշնակիցների հետ ունեցած պայմանավորվածությանը, ռազմակալեց Արևելյան Եվրոպայի երկրները՝ Ռումինիա, Բուլղարիա, Լեհաստան, Հունգարիա, Արևելյան Գերմանիա: 1945–1949 թթ. ԽՄԿԿ կենտրոնի գլխավոր քարտուղար Ի. Ստալինի օրոք Արևելյան Եվրոպայի երկրներում հաստատվեցին համայնավարական վարչակարգեր և ձևավորեց «սոցիալիստական ճամբարը»: ԽՍՀՄ ազդեցության տակ հայտնվեցին նաև Չեխոսլովակիան և Հարավսլավիան, որտեղ կառավարությունը գլխավորեցին համայնավարները: Այս կերպ ԽՍՀՄ-ը ցույց էր տալիս կոմունիստական գլխավոր երազանքին՝ համաշխարհային հեղափոխությանը և, հետևաբար, համաշխարհային տիրապետության հասնելու իր վաղեմի նպատակի արդիականությունը: Վտանգված էր Արևմտյան Եվրոպայի սպազան:

ԱՄՆ նախագահ Թրումանը կոչ էր անում կանխարգելելու ամբողջատիրական վարչակարգերի հաստատումը և օգնելու աշխարհի ազատ ժողովուրդներին պահպանել իրենց ազատությունը: Ուստի միանգամայն բնական է թվում ԱՄՆ-ի գործելակերպը: Իր ուժի և հնարավորությունների շնորհիվ ԱՄՆ-ը միակ պետությունն էր, որ կարող էր հակադրվել խորհրդային վտանգին և ապահովել եվրոպական ու ասիական երկրների անկախ ու անվտանգ գոյությունը: